

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ  
ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ  
JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 21

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2022

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
արևելագիտության ֆակուլտետի  
գիտական խորհրդի որոշմամբ**

**Խմբագրական խորհուրդ՝**

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)

Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր

Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ

Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր

Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր

Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ

Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ

Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր

Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.

Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.

Րեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)

Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)

Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)

Իլյա Յակուբովիչ բ.գ.դ., պրոֆեսոր (Գերմանիա)

Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Արաբագիտություն

#### *Գոռ Գևորգյան*

ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ  
ՆԿԱՏԱՍԱՐ. ԱԲԴԵԼ ՖԱԹԹԱՀ ԱԼ-ՍԻՍԻԻ  
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ (2013-2019).....7-17

#### *Արամ Գասպարյան*

ԱԼԺԻՐԻ ԲԵՐԲԵՐՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՇԱՐԺՈՒՄԸ (1962-1999 թթ.).....18-30

#### *Տարթևիկ Մկրտչյան, Միքայել Հովհաննիսյան*

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ  
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐԱԲԱԼԵԶՈՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ԿԱՅՔԵՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ  
(2016, 2020 թթ.). ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ.....31-49

#### *Արմինե Հակոբյան*

ԱՐՈՒ ԲԱԿՐ ԱՍ-ՍՈՒԼԻԻ «ԱԽԲԱՐ ԱԼ-ՇՈՒԱՐԱ»  
ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՍՊՈԶԻՑԻԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ  
ԿՈՆՑԵՊՏԸ.....50-65

#### *Մոհամմեդ Հաջ Իբրահիմ*

ԱՇԽԱՋՐԱԾՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....66-78

#### *Խադիջե Ահմադ Մեհրաբի*

ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ  
ՂՈՒՐԱՆԻ ՏԵՔՍՈՒՄ.....79-86

### Իրանագիտություն

#### *Անուշ Ստամբոյյան*

ԻՄԱՍ ԽՈՍԵՅՆՈՒ «ՎԵԼԱՅԱԹ-Ե ՖԱԴԻՀ»  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿՐՈՆԱԿԱՆ,  
ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....87-97

#### *Ալեն Հայրասյետյանց*

ՆՈՐԱԳՅՈՒՏ DNF ԱՐՋԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ  
ԲԱՅԱԶԵՎԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ»,  
ԹԵ՛ ԽՈՐՀՈՒՐԴ.....98-110

*Նունիկ Դարբինյան*

ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅԱՆ ՄԵՁ ԵՎ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ  
ՀԱՆԴԻՊՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ՇՈՒՐՁ.....111-133

*Տիգրան Չանդոյան*

ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ-  
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԹՈՒՐԹԻԱՅԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ.....134-144

**Թյուրքագիտություն**

*Կուրադայ Ուրազանևա, Վերունիկյա Ռազունովսկայա, Ալեքսանդր Մաֆայրյան*  
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՈՒ-  
ԹԱՅԻՆ ՏՐԱՆՍՄԻՍԻԱՅԻ ՁԵՎ: ՂԱԶԱԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒ-  
ԹՅԱՆ՝ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ .....145-166

*Արշակ Գևորգյան*

ՍՏՎԵՐԱՅԻՆ ԿԱՈՎԱՐՄԱՆ ՀԻՔՐԻԴԱՅԻՆ ՑԱՆՑԱՅԻՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ.  
ԹՈՒՐԹԱԿԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ.....167-186

*Մարգարիտա Կրտիկաշյան*

ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՉՑԱՆԻ ԴԵՐԸ ԹՈՒՐԹԱԿԱՆ  
ԵՐԱՄՇՏԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ.....187-200

*Սամվել Ռամազյան \**

ԵՎՐՈՊԱՅՈՒԲ (ՖՐԱՆԿԻ) ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ  
ԹՅՈՒՐԹԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐՈՒՄ.....201-223

*Անի Ոսկանյան*

ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ ԳԱՎԱՌԱԿԻ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ.....224-238

\*\*\*

*Ռուսլան Յականյան*

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ (ԳԵՐԵՐԿԱՐ, ԵՐԿԱՐ, ՄԻՋԻՆ,  
ԿԱՐՃ ԵՎ ԳԵՐԿԱՐՃ ԹՎԱԳՐՈՒՄՆԵՐ).....239-247

*Հովհաննես Խորիկյան*

ԿԱՊԱՐՈՎԿԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ  
ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ.....248-261

## CONTENT

### Arabic Studies

*Gor Gevorgyan*

EGYPT'S POSITION ON THE SYRIAN CRISIS: DURING THE  
PRESIDENCY OF ABDEL FATTAH AL-SISI.....7-17

*Aram Gasparyan*

ALGERIAN BERBERS MOVEMENT FOR THE PRESERVATION OF  
NATIONAL IDENTITY (1962-1999).....18-30

*Tatevik Mkrtchyan, Mikayel Hovhannisyan*

COVERAGE OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT IN  
ARABIC-LANGUAGE MEDIA DURING BOTH WAR  
PERIODS (2016, 2020): DISCOURSE ANALYSIS.....31-49

*Armine Hakobyan*

COMPOSITION AND AUTHOR FUNCTION OF ABU BAKR  
AS-SULI'S "AKHBAR AL-SHU'ARA".....50-65

*Mohammed Haj Ibrahim*

THE ROLE OF HYDROCARBON RESOURCES IN  
THE CONTEXT OF THE SYRIAN CONFLICT.....66-78

*Khadije Ahmad Mehrabi*

THE PROBLEM OF ALTERNATION OF PARTICLES  
IN THE TEXT OF THE QUR'AN.....79-86

### Iranian Studies

*Anush Stamboltsyan*

THE RELIGIOUS, HISTORICAL AND POLITICAL  
PRINCIPLES OF IMAM KHOMEINI'S "VELAYAT-E FAQIH"  
DOCTRINE.....87-97

*Alen Hayrapetyanc*

THE INTERPRETATION OF THE "MYSTERIOUS" VERB FORM OF  
THE RECENTLY DISCOVERED DNF INSCRIPTION:  
"BLESSING OR ADVICE?".....98-110

*Noonik Darbinian*  
SOME CREATURES FOUND IN IRANIAN FAIRY  
TALES AND FOLKLORE..... 111-133

*Tigran Candoyan*  
ETHNO-GEOGRAPHIC BOUNDARIES OF KURDISH  
NATIONALISM IN THE TERRITORY OF  
THE REPUBLIC OF TURKEY..... 134-144

### **TurkicStudies**

*Urazaeva K.B., Razumovskaya V.A., Safaryan A.V*  
LITERARY TRANSLATION AS A TYPE OF CULTURAL  
TRANSMISSION IN SOCIAL TRANSFORMATIONS  
CONTEXT. ABOUT KAZAKH LITERATURE  
TRANSLATIONS INTO ARMENIAN..... 145-166

*Arshak Gevorgyan*  
THE PARAPOLITICAL PERCEPTION OF THE HYBRID  
NETWORK STRUCTURES OF SHADOW GOVERNANCE:  
THE TURKISH DEEP STATE..... 167-186

*Margarita Krtikashyan*  
THE ROLE OF TIGRAN CHUKHAJIAN IN  
THE TURKISH MUSIC SCENE..... 187-200

*Samvel Ramazyan*  
THE PERSONAGE OF EUROPEAN (FRANK)  
IN ARMENIAN AND TURKIC EPICS..... 201-223

*Ani Voskanyan*  
ABOUT THE PECULIARITIES OF ECONOMIC LIFE IN  
THE CHORK-MARZPAN SUB-DISTRICT,  
ADANA PROVINCE..... 224-238

\*\*\*

*Ruslan Tsakanyan*  
CHRONOLOGICAL PROBLEMS OF ASSYRIAN HISTORY  
(EXTRA-LONG, LONG, MIDDLE, LOW,  
ULTRA-LOW DATES)..... 239-247

*Hovhannes Khorikyan*  
THE TERRITORY AND BOUNDARIES OF CAPPADOCIA  
IN ACHAEMENID PERSIA..... 248-261

**ԵՎՐՈՊԱՑՈՒ (ՖՐԱՆԿԻ) ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ  
ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐՈՒՄ**

*Բանալի բառեր՝ «Քյոռոլի» էպոս, «Սասնա ծռեր», եվրոպացի-  
ֆրանկ, Բապր Ֆրենկ, Ֆերանգի, Խաչ պարոններ, խաչակիրներ:*

Վերջին շրջանում «Քյոռոլի» էպոսի թուրքական տարբերակների ուսումնասիրությունը բացահայտում է ոչ միայն հայկական կերպարների և հայերի հետ կապված դրվագների, այլև հայոց վիպական տարրերի որոշակի առկայությունը դրանցում<sup>2</sup>:

Վերոհիշյալը պայմանավորված է մի քանի հանգամանքներով, այն է.

□ *էպոսի պատմական հիմք հանդիսացած իրադարձությունների՝ հայկական և հայաբնակ տարածքներում ծավալված լինելը,*

□ *հայոց վիպական ավանդույթի կենսունակությունն անգամ տարածաշրջանի ժողովրդագրական դիմագծի փոփոխություններից հետո,*

□ *թուրքալեզու հայ աշուղների մասնակցությունն էպոսի կազմավորմանն ու ձևավորմանը:*

Այս տեսակետից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում եվրոպացու կամ ֆրանկի կերպարի և դրա հետ

<sup>1</sup> ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի ավագ դասախոս, ԳԱԱ ՀԱԻ գիտաշխատող, ք.գ.թ., էլ. փոստ՝ sramaz@mail.com:

<sup>2</sup> Տե՛ս Ռամազյան Ս., Որդեգրի կերպարը «Քյոռոլի» էպոսում և դրա պատմականության հիմքերը, Արևելագիտության հարցեր, թիվ 13, էջ 272-311, Երևան, 2017, նույնի՝ Ձիու կերպարը «Քյոռոլի» էպոսում և դրա առասպելաբանական հիմքերը, «Կանթեր», թիվ 2 (75), էջ 25-39, 2018, նույնի՝ Վաճառականի կերպարը «Քյոռոլի» էպոսում և դրա պատմականության հիմքերը, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 2 (653), էջ 205-219, 2018:

կապված դրվագների քննությունը «Մասնա ծոեր» էպոսից և «Քյոռոզլի» էպոսի արևմտյան խմբի տարբերակներից:

### **Եվրոպացու կերպարը «Մասնա ծոեր» էպոսում և հայ բանահյուսության մեջ**

«Մասնա ծոերի» պատումներին բնորոշ է Կապուտկոդի (կամ Կադզվանի) թագավոր Վաչեի (Վաչո-Մարջո, Վաչոյ-Մարջոյ նն) դուստր Խանդուրթի ուզնկաններից Բապը Ֆրենկի (Բաբը/Բաբա/Բաբե Ֆրենկի, Բապ-Ֆրենկի, Պապ-Ֆրենկ) կերպարը, որը հանդես է գալիս Դավթի հակառակորդ ուզնկան թագավորների շարքում (Աջմու Շապուհ, Օդան-Տոդան, Լանդբանդ նն): Մեկ այլ պատումի մեջ ձուլվել են Բապը Ֆրենկի և հայտնի հակառակորդներից Չմշկիկ Սուլթանի կերպարները (Պապե Ֆրանկին-Չմրշկե Սուլթան)<sup>3</sup>:

Սովորաբար Ֆրենկին հրահրում է Աջմու Շապուհը (Իրանի Տեր), ինչից հետո Բապը Ֆրենկին սպառնալից նամակ է գրում Դավթին, որին, սակայն, Դավթի քնած ժամանակ նրա անունից համարձակ պատասխան է գրում Խանդուրթը (*«Թե որ կը գաք՝ էրկտով էկեք. Դուք չեք կարնա մենակ կովեք»*)<sup>4</sup>, Ֆրենկին վախեցնելու և այդ կերպ կռիվը կանխելու մտադրությամբ: Խանդուրթը պատվիրում է արժանավայել ընդունել Ֆրենկի երկու նամակաբերներին, պատվել, տալ նվերներ, 2 ձի և ճանապարհել: Նամակաբերները մեկնում են Խանդուրթին օրհնելով. *«Ուտքով էկանք, ձիով կ'էրթանք»*<sup>5</sup>: Հանդուզն պատասխանից զայրացած Ֆրենկը զորքով ներխուժում է Խանդուրթի հոր թագավորություն՝ ցանկանալով տիրանալ Խանդուրթին: Պատումների մեծ մասում

<sup>3</sup> Մասնա ծոեր, հտ. Ա, խմբագրեց պրոֆ. դր. Մ. Աբեդյան, աշխատակցությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1936, էջ 465:

<sup>4</sup> Մասնա ծոեր. հայ ժողովրդական հերոսավեպ: Առաջաբանը, բառարանը, ծանոթագրությունները՝ Ս. Հարությունյանի, Երևան, 1981, էջ 268:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 267:



Դավիթը ճակատամարտում հաղթում է Ֆրենկին և փախուստի մատնում, վերջինս երկյուղում և փախչում է իր քաղաք: Դավիթը հետապնդելով թշնամուն՝ մուտք է գործում քաղաք, գտնում և զլխատում՝ միաժամանակ խնայելով Ֆրենկի գորականներին ու պատվիրելով. «Քանի դու ժիր եք, կռիվ միք է՛րթա»<sup>6</sup>: Մոկաց պատումներից մեկում Դավիթը, Բաբը Ֆրենկից բացի, սպանում է վերջինիս «ջոջ մարդերին» («Ջաթի ճուշ մարդիր կը սպանի»), ապա Բաբը Ֆրենկի քաղաքում մնացածների համար թագավոր նշանակում<sup>7</sup>:

Միննույն կերպարն այլ պատումներում հանդիպում է որոշակիորեն ձևափոխված անուններով, ինչպես «Ֆրանկսըզի թակավոր»<sup>8</sup>: Մի տարբերակով Սըսրա Մելիքի գորահավաքի հայտարարության տեքստում նշվում են երկու տարբեր կերպարներ, սակայն միննույն անուններով, այն է՝ Բաբա Ֆրենկի և Ֆրենկի Պապի<sup>9</sup>, ինչը վստահաբար շեղում-շփոթ է: Ձենով Օհանի հաջորդող ափսոսանքի խոսքում տվյալ երկուսից հիշատակվում է միայն Բաբա Ֆրենկին («Ափսոս, խազար է՛ջ ափսոս Քուռիկ Ջալալին. Փեշքեշ պտի անեի Բաբա Ֆրենկին») <sup>10</sup>, ինչը ևս վկայում է վերը նշված շեղման մասին:

Այլ պատումներում միննույն կերպարը դիվականացվում է, ինչը բնորոշ է Սասնա ծռերի այլ հակառակորդների կերպարներին ևս: Մոկաց պատումներից մեկում «Ֆրենկը Դիվ», «Ֆրանկա Դիվ», «Ֆրենկիստանա Դիվ» անուններով հիշատակվող դիվական

---

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 274: Հմմտ. Սասնա ծռեր, հտ. Ա, էջ 465: Բաբը Ֆրենկի հետ կապված դեպքերի զարգացումները միանման կերպով տեղ են գտել նաև Էպոսի 1993 թ. կազմված «Սասունցի Դավիթ» համահավաք բնագրում (Սասունցի Դավիթ (համահավաք բնագիր), հյուսեց և խմբագրեց Գ. Գրիգորյանը, աշխատակցությամբ Ա. Շահումվարյանի և Ա. Բուդաղյանի, պատ. խմբագիր՝ Ա. Նազինյան, Երևան, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ հրատ., 1993, էջ 320-325):

<sup>7</sup> Սասնա ծռեր, հտ. Ա, էջ 465:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 908:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 264-265:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 272-273:

կերպարը Բաթմանա Բուդեի հետ ծառայում է Մըսրա Մելիքին, որի հրամանով փորձում են մանուկ Դավթին սպանել, սակայն չեն հաջողում, ուստի խոստովանում են Մելիքի մտադրության մասին, պատրաստակամություն հայտնում այսուհետ ծառայել Դավթին և նրա հետ վերադառնալ Սասուն<sup>11</sup>:

Մինևույն կերպարը (Պապէ-Ֆըրընկ) բնորոշ բոլոր գործողություններով առկա է բանահավաք Տիգրան Չիթունու «Սասունական» մշակման մեջ<sup>12</sup>, ինչի համար հիմք են հանդիսացել հիմնականում Սպարկերտի բարբառով գրառված պատումները: Սասունցի Դավթի դեմ Պարսից արքայի (Իրանի Տեր կամ Աջմու Շապուհ) և Ֆրենկի գործակցության դրվագը Չիթունին գնահատում է որպես պատմական իրադարձությունների արձագանք, այն է՝ *«Պարսից ևւ Հռոմայեցոց (վերջէն Բիւզանդիոնի) հակամարտութիւնը ևւ երբեմն զինակից-դաւադրութիւնը՝ Հայաշխարհի հանդէպ»*<sup>13</sup>:

Սովորաբար Բապը Ֆրենկը նույնացվում է Հռոմի պապի հավաքական կերպարի հետ, որպես խաչակրաց արշավանքների արձագանք: Դեռևս Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի կողմից այն գնահատվել է որպես ֆրանկների, իմա՝ խաչակիրների վերհուշ, ըստ այդմ, Ֆրանկի պապը հավաքական անունն է այն

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 393-395: Մինևույն կերպարի դրսևորումներից կարող է լինել *«Պարան Բվեք Ֆորնտա դեր»*, որը գործում է մեկ այլ սակավադեպ հանդիպող կերպարի՝ Պարան Պոռչի հետ (օր., Սասնա ծոեր. ժողովրդական վեպ, աշխատությամբ Ս. Հարությունյանի, Երևան, 1977, էջ 604-606): Տ. Չիթունու «Սասունական» մշակման մեջ *«Պարան-Բրվեք-Ֆորնտա»* ավանդական հակառակորդների շարքում է՝ Օդան, Դոդան, Պարան-Պոռչ, Շըրրզան-Խորասական, Լոռու-Համգա, Պարսիկ-Շահ, նաև՝ Սև-Թագավոր (Չիթունի Տ., Սասունականը: «Սասնաց տուն», «Սասնայ ծոեր» կամ «Սասունցի Դավիթ» անուններով ծանօթ Հայ ժողովրդական դիցազնավեպին եօթը ճիւղին ամբողջական պատմություն, Փարիզ, 1942, էջ 976-978): Այնուհանդերձ, չի բացառվում «Ֆրոբնտայի» ծագումը թրք. *firtna*-ից (բառացի՝ «փոթորիկ»), արևմտահայ բարբառներում՝ «Ֆրոթոնա», «Ֆրոթունա», «Ֆուրթունա»:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 999-1004:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 999:

բոլոր խաչակիրների, որոնք Ասորիքում, ինչպես նաև Կիլիկիայում, հարձակվում էին հայոց իշխանությունների վրա՝ դրանց տիրանալու նպատակով<sup>14</sup>: Ըստ այդմ, իրավացիորեն ենթադրելի է, որ այն չէր կարող XII-XIII դդ. ավելի վաղ ստեղծված լինել<sup>15</sup>:

Ընդհանրապես, խաչակիրներին որպես «ֆրանկ» էին բնորոշում և՛ հայերը, և՛ Արևելքի մյուս ժողովուրդները, թեև խոսքն իրականում ֆրանսիական ազգի կորիզը կազմած գերմանական ցեղանվան մասին է: Վերոհիշյալը բացատրվում է նրանով, որ առաջին խաչակրաց արշավանքի մասնակիցները հիմնականում Ֆրանսիայից էին և ֆրանսախոս, անգամ հիմնական մասնակիցներից իտալական նորմանները ևս ֆրանսախոս էին<sup>16</sup>:

Գալլիային և ֆրանկներին հայերը ծանոթ էին վաղուց, ինչի մասին է վկայում VII դ. մատենագիր և աշխարհագրագետ Անանիա Շիրակացու «Աշխարհացոյցի» մանրամասն նկարագրությունը. *«Ունի եւ քաղաքս եւ ազգս բազումս: Ազգն փրանգ լինի եւ ի նմա. եւ հզարս գումէշ սպիտակ եւ սպանող մարդոյ»*<sup>17</sup>: Ընդ որում, Շիրակացին խոսելով «հզոր ֆրանկների» մասին՝ հստակ զանազանում է, որ նրանց կեսը բնակվում է Գալլիայում (Գալիուս), մյուս կեսը՝ Գերմանիայում<sup>18</sup>:

Հետագայում զանազան ուշ խմբագրություններ կամ ուղղակի ի սկզբանե կեղծիք հանդիսացող տեսիլքների, կանխասացությունների և վախճանաբանական (Էսքատոլոգիական) բնույթի այլ գրություններով («Դաշանց թուղթ» են) փորձեր էին արվում Հայաստանի ազատագրության հարցը

<sup>14</sup>Մասնա ծոեր, հտ. Բ, Բ մաս, խմբագրեց ակադ. Մ. Արեղյան, աշխատակցությամբ պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1951, էջ 825:

<sup>15</sup>Տեր-Ղևոնդյան Վ., Կիլիկյան Հայաստանը և Այյուբյան պետությունները (1171-1260), Երևան, 2017, էջ 247:

<sup>16</sup>Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հտ. Ա, Երևան, 2005, էջ 9:

<sup>17</sup> Անանիա Շիրակացի, Մատենագրություն: Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Արրահամյանի և Գ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 356:

<sup>18</sup>Նույն տեղում, էջ 271:

կապակցել նաև «փռանգների» զենքի գործությանը: Ընդ որում, եթե XI-XII դդ. հայկական շրջանակներում լատինների և ֆրանկների հետ էին կապվում փրկագործական սպասումները, ապա հաջորդող ժամանակահատվածի, այն է՝ խաչակրաց արշավանքների և արդեն անմիջական շփումների արդյունք իրավամբ կարելի է համարել Բապը Ֆրենկի բացասական կերպարի առաջացումը: Միանգամայն հավանական է, որ որոշակի պատկերամարտության կրող և, ըստ էության, դրա արդյունքում խաչի ընդգծված պաշտամունք ունեցող հայերին առանձնահատուկ ներշնչանք է պատճառել եվրոպական ասպետների խաչանշան հանդերձը, ինչպես ենթադրել է Հ. Պետրոսյանը<sup>19</sup>: Հատկանշական է, որ հայ մատենագրության մեջ «խաչակիր» բառը XII դ. հանդիպում է «խաչընկալ» և XIII դ.՝ «խաչագգեստ» ձևերով<sup>20</sup>: «Արիական ազգին ֆրանկաց» անգամ վերագրվում էին այնպիսի մտադրություններ, որոնք իրականում նրանց ծրագրերի մաս չեն էլ կազմել, ինչի լավագույն օրինակ են XVI դ. բանաստեղծ Նահապետ Քուչակին վերագրվող «Տաղ ի վերայ Մոսկովու թագաւորին» ստեղծագործության բանաստեղծական տողերը.

*Ֆրանկն ուր դաւլին<sup>21</sup> վերայ  
Ել կու տայ, ծովէն դուրս կու գայ.  
Թէ. «Երթանք, Երուսաղէմ առնենք,  
Յայլագգաց ձեռքն չի մնայ...  
Իջնունք ի յԷջմիածին...»<sup>22</sup>:*

<sup>19</sup> Պետրոսյան Հ., Հայ ինքնության ավանդական խորհրդանշանները և դրանց մերօրյա դրսևորումները. տապանակիր լեռը և կորուսյալ դարխաղը: Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում. գիտաժողովի զեկուցումներ, էջ 123-138, ԵՊՀ, Երևան, 2013, էջ 130:

<sup>20</sup> Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 9-10:

<sup>21</sup> «Ղալ» (արաբ. qawl), բառացի՝ «խոսք», այսինքն՝ ֆրանկն իր խոսքի (խոստման) համաձայն:

<sup>22</sup> Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 130: Հմմտ. Նահապետ Քուչակ, Աշուղական երգեր, աշխատասիրությամբ Վ. Եղիազարյանի, Երևան, 2017, էջ 64:

Հետագա անմիջական հարաբերությունները խաչակիրների հետ ինչպես Հայոց Կիլիկիայում, այնպես էլ հայաշխարհից դուրս, օրինակ, Եդեսիայում (Ուռհա) և Կիպրոսում<sup>23</sup>, պատճառ հանդիսացան նրանց նկատմամբ վերաբերմունքի արմատական վերանայման: Միանգամայն հատկանշական է, որ Արևելքում առաջին իսկ խաչակիր կազմավորումը՝ Եդեսիայի կոմսությունը հռչակվել է 1098 թ. մարտին, քաղաքի՝ հայազգի կառավարիչ Թորոս կյուրոպատի օգնությամբ Բալդուին Բուլոյնացու գրավումից և առժամանակ անց Թորոսի դավադրական սպանությունից հետո<sup>24</sup>: Հետագա XII դ. հայերի հանդեպ ֆրանկների դրսևորած արգահատելի վերաբերմունքի փաստ է համարվում հետևյալը. Կիլիկիո Թորոս Բ հայոց իշխանի կողմից Երուսաղեմի Ամորի Ա թագավորին առաջարկվում է 30 հազար հայ ընտանիք վերաբնակեցնել Պաղեստինում՝ երկրի շենացման համար, ինչի առնչությամբ տեղի կաթոլիկ կղերը, պայման է դնում եկվոր հայերից հատուկ եկեղեցական տասանորդ գանձելը: Դրանից վիրավորված Թորոսը պատասխանում է. «Մտրուկ դառնալու համար չէ, որ հայերն ուրիշ երկիր պիտի գնան»<sup>25</sup>: Մանավանդ, 1116-1117 թթ. խաչակիրների հարձակումներից առավել տուժեցին մերձեփրատյան հայկական իշխանությունները, որոնք ուղղակի վերացվում էին և նվաճվում նորելուկ զավթիչների կողմից, ինչի մասին վկայում է Սմբատ Սպարապետը. «Եւ այնպէս նեղեցին կոմսերն Ֆրանգաց զիշխանսն Հայոց մինչևէ հանին ի գաւառաց եւ յամրոցաց իւրեանց, և ոչ ոք կարէ պատմել զդառնութիւն զոր ածին Ֆրանգնին ի վերայ Հայոց»<sup>26</sup>:

<sup>23</sup> Հայտնի է, որ թեև Կիլիկիայի Լևոն Բ արքան օժանդակել է Անգլիայի Ռիչարդ Առյուծասիրտ խաչակիր արքային Կիպրոսի գրավման հարցում, այնուամենայնիվ, օրինակ, Լիմասոյի հայերը տեղի հույների հետ դիմադրել են վերջինիս 1191 թ. արշավանքի ժամանակ և քաշվել լեռները:

<sup>24</sup> Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 33, 37-38:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 135-136:

<sup>26</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Ի Վենետիկ – Ս. Ղազար, 1956, էջ 145:

Ի վերջո, հակառակ Հռոմի պապի և եվրոպական տերությունների ջանքերի՝ ունիայի փորձերը հայոց հետ վերջնական հաջողություն չունեցան, ունիթորների հոսանքն ուղղակի վերածվեց Վատիկանին ենթակա հերթական կաթոլիկ համայնքի, որը բազմիցս օգտագործվեց կրոնաքաղաքական բարդ հաշվարկներում:

Ըստ այդմ, նման իրողությունների դառը վերհուշ կարելի է գնահատել Սասունցի Դավթին հակառակորդ Բապը Ֆրենկի ի հայտ գալը հայոց էպոսում, ինչի համար, փաստորեն, ձևավորված էին համապատասխան պայմաններ:

Թեև էպոսի պատումներին բնորոշ է թագավորների հիշատակությունը «Խաչապաշտ» և «Կռապաշտ» ընդհանուր անուններով, սակայն Բապը Ֆրենկի դեպքում որևէ նման բնորոշող մակդիր չի օգտագործվում՝ հակառակ կերպարի արևմտաքրիստոնեական ծագմանը: Բոլոր պատումներում, առանց որևէ շեղման, Բապը Ֆրենկը Սասունցի Դավթի ավանդական հակառակորդ կերպարներից է, որոշ դեպքերում, թերևս, առավել ներկայացված: Նման կերպար ի հայտ կարող էր գալ միմիայն հենց վերը նշված ժամանակահատվածում, երբ խաչակիրների, հետագայում կաթոլիկների կամ ֆրանկների և հայկական ուղղությամբ որպես նրանց քաղաքականության արդյունք ձևավորված ֆրանկ-հայերի, իմա՝ կաթոլիկ հայերի դիրքերից որոշակի բացասական դերակատարություն էր իրականացվում հայկական միջավայրում: Անշուշտ, հայոց պետականության անկումից և հայրենիքից հայության զանգվածային արտագաղթից հետո, մանավանդ, ուշ միջնադարում, երբ ազատագրական գաղափարներն սկսում էին տարածվել հայրենիքում և զանազան գաղութներում, «ֆրանկների» և «Ֆռանկստանի» ընկալումն

առավելապես վերանայվել և դրական էր դարձել<sup>27</sup>, թեև միջեկեղեցական հարաբերությունների առումով մոլեռանդության դրսևորումներ միշտ էլ արձանագրվել են երկու կողմերից էլ<sup>28</sup>:

«Պապէ-Ֆորնկի թագաւորի» և նրա որդու կերպարները հանդիպում են Վասպուրականի Կարկառ գավառի բարբառով Տիգրան Չիթունու գրառած և 1929 թ. հրատարակված «ԼԷՈ ՈՒ

<sup>27</sup> 1513 թ. Վենետիկում տպագրված «Պատարագատետրի» հիշատակարանում Հակոբ Մեղապարտը նշել է. «Գրեցաւ տար թատռ ի ՋԿԲ {1513} ի աստուածապահ քաղաքս ի Վենեժ, որ է Վենիսիկ, Ֆռսնկատէան» (Յակոբ Մեղապարտ, Պատարագատետր, Վենեժ, 1513, էջ 83): Փաստորեն, հակառակ Եվրոպայում հենց Վենետիկի տարածված համբավին՝ որպես պոռնկանոցների և զվարճությունների կենտրոնի, Հակոբ Մեղապարտն այն բնորոշում է որպես «աստուածապահ» (անշուշտ, որոշ ազդեցություն կարող էր թողնել մեծ թվով եկեղեցիների և սրբանուն կղզիների առկայությունը): Ընդհանրապես, Եվրոպայի և Հռոմի նկատմամբ նման վերաբերմունքն արդեն հատուկ էր տվյալ ժամանակահատվածին, իսկ կաթոլիկ հայերի համար՝ արդեն նմիրագործված պապական այթոռով: Անշուշտ, որևէ համեմատություն չէր կարող լինել Օսմանյան կայսրության և «Ֆռանկատանի» միջև, հայերն ինքնաբերաբար ձգտելու էին դեպի թվացյալ հարազատ քաղաքակրթություն, մասնավորապես, կրթության և առևտրի ծավալման նկատառումներով:

<sup>28</sup> XVII դ. Հռոմի եկեղեցու վարած քաղաքականության արդյունքում բռնի կաթոլիկացման ենթարկվեցին մի քանի դար իրենց ազգային դեմքը պահպանած լեհահայերը, մինևույն քաղաքականությունը նպաստում էր նաև այլ կաթոլիկ երկրներում հայերի ձուլմանը: Բավական ցցուն օրինակ է 1702-1706 թթ. Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարք Ավետիք Եվդոկացու (1657-1711 թթ.) ողիսականը: «Հռոմեական եկեղեցու երդվյալ թշնամին» և «կաթոլիկության անդրդվելի և անողորմ հալածիչը» կաթոլիկների մեթենայությունների արդյունքում այթոռագուրկ է լինում և 1706 թ. արքայություն, սպա արքորից վերադառնալուց ուղղակի առևանգվում Օսմանյան կայսրությունում՝ ֆրանսիացի դեսպան դ'Ֆերիոյի կողմից, փոխադրվում Սիցիլիայի, Մարսելի բանտեր, ի վերջո, բանտարկվում Բաստիլյում: Եվրոպական պատմագրության մեջ հայտնի է որպես «Երկաթե դիմակի» 14 թեկնածուներից մեկը: 1710 թ. բանտից ազատվելուց հետո 9 ամիս անց պատրիարքը վախճանվել է Փարիզում՝ այդպես էլ չկարողանալով հեռանալ Ֆրանսիայից: Մեփական շահերի առաջխաղացման և Օսմանյան կայսրությունում (ինչպես նաև Իրանում) կաթոլիկ քարոզչության ու պրոզելիտիզմի իրականացման նպատակով եվրոպական երկրներից հովանավորվող կաթոլիկ կղերք երբևէ չի խորշել հայազգի անձանց հետապնդումներից ու գրապարտություններից: Անգամ հայ կաթոլիկների նկատմամբ պարբերաբար դրսևորվել են վերապահումներ, մանավանդ, երբ համայնքների համար նշանակվել են այլազգի հոգևոր հովիվներ («ժողովրդապետ»), չնայած Միսիթարյան և այլ հայ կաթոլիկ կենտրոնների գոյությանը: Ակնառու է նոր ժամանակահատվածում կաթոլիկ աշխարհի միակ բարձրաստիճան հայազգի գործչի՝ կուրիալ կարդինալ Գրիգոր-Պետրոս Աղաջանյանի օրինակը, երբ 1950-1960-ական թթ. վերջինս համարվում էր Հռոմի պապի հավանական թեկնածու, սակայն, ի վերջո, կրոնական, քաղաքական և անգամ հատուկ ծառայությունների մակարդակով իրականացված գործողությունների արդյունքում նրա ընտրությունը խափանվեց:

Պապե-Ֆորնկ» ավանդազրույցում («հեքիաթ»)՝<sup>29</sup>։ Ուշագրավ է, որ «Արեւմտոց թագաւոր Պապե-Ֆորնկը» իր որդու համար «Արեւեոց թագաւորից» պահանջում է կնության տալ նրա դստերը, որին երագում սիրահարվել է թագաժառանգը. *«Աղջիկը լուր տուաւ իր հորը, ըսաւ՝ Ահա՛ն ես թոյն կը խմեմ կը մեննիմ՝ չե՛մ երթար այն տղան ասներ... Հայրն ալ ելաւ պատասխան տուաւ Պապե-Ֆորնկի թագաւորին թէ՛ Ես իմ աղջիկը չեմ իտար քու լաճուն...: Ան ալ ըսաւ՝ Որ դուն չես տար՝ ես ու դուն կոչի պիտի ընենք, թէ կրցայ՝ կը տանիմ. թէ չկրցայ՝ չեմ տանիր: Պապե-Ֆորնկի թագաւորն ելեր իր գօրքը դրկեր է՝ եկեր մեր քաղքի բոլորը բռներ են... կ'ըսէ՝ Ահա՛ն կա՛մ քու աղջիկը պիտի տաս, կա՛մ քու քաղաքն արեցի»*<sup>30</sup>։ Միանշանակ վերոհիշյալը կրկնում է Սասնա պատումների բնորոշ հատվածը՝ մի տարբերությամբ, որ դրացի երկրի թագավորի դստերը Բապը Ֆրենկին պահանջում է ոչ թե իր, այլ որդու համար։

Միննույն կերպարը (Պապը Ֆրրընգի, Պապե Ֆրրընգի կամ Ֆրրընգա պապ) հանդիպում է Մոկսում գրառված «Չըլ-Բըսկ» հեքիաթում<sup>31</sup>, ինչն, ըստ երևութին, Սասնա պատումների ազդեցության հետևանք է։ Ծանոթ կերպարի համեմատաբար դիպվածային դերակատարությունը որոշակիորեն ընդգծվում է, երբ հեքիաթի գործողությունները տեղափոխվում են «Պապը Ֆրրընգը երկիր»<sup>32</sup> և «Պապե Ֆրրընգա քաղաք»<sup>33</sup>, որտեղ էլ իշխում է տվյալ թագավորն ինքը։

Ըստ ամենայնի, միննույն կերպարի դիվանականացման վերհուշն է պահպանվել կրկին Մոկսում գրառված «Պալաք-Աչառ»

<sup>29</sup> Չիթունի Տ., Հայ անգիր գանձերեն. Լեւօ ու Պապե-Ֆորնկ, «Անահիտ», Ա տարի, թիւ 4, Փարիզ, 1929, էջ 84-93:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 86:

<sup>31</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետև՝ ՀԺՀ), հտ. XVII, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, Երևան, 2012, էջ 370-382: Գրառվել է 1911 թ., Մոկս քաղաքում:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 376:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 380:



հեքիաթում<sup>34</sup>, որում հերոսներից Դատվանա գվիրը «Ֆըռնգաց դևերից» է գանգատվում. «Իս բիրը չուր կես ծովուն, Ֆըռնգաց տելիր գարկեցին վար իմ ձեռաց, իցկիցին ծով»<sup>35</sup>:

Ֆըռնկա պապու դստեր («Ֆըռնկա պապու աղչիկ») կերպար է հանդիպում «Ռոստամ Չալ» հայ-իրանական դյուցազնավեպի Մոկաց պատումներից մեկում («Ռոստամի խեքաթ»), ընդ որում, Ռոստամն իր զինակիցների հետ ազատում է նրան դևերի ձեռքից և հասցնում նրա հայրական թագավորություն՝ «Ֆոնգանց հ'երկիր»<sup>36</sup>: Բնականաբար, բուն իրանական էպոսի հետ տվյալ դրվագը որևէ աղերս չունի, այլ հանդիսանում է տեղական հորինվածք, ըստ ամենայնի, սերելով «Մասնա ծռերի» տեղական պատումներից:

Հայ բանահյուսական այլ նյութերում ևս առավելապես խոսվում է Ֆոանգստանի մասին, որոշ դեպքերում հանդես են գալիս Ֆոանգստանի թագավորի և նրա որդու կերպարները<sup>37</sup>:

Ֆոանկի կերպարի առնչությամբ առկա է ավելի ուշ բանահավաք Գ. Թարվերդյանի (Վերդի) գրառած «Ֆոանգի պատարագը» անտիպ հեքիաթը, որում նկարագրվում է Հայ եկեղեցու հետևորդ հայերի նկատմամբ, ըստ ամենայնի, ևս ազգությամբ հայ կաթոլիկի արհամարանքը և խորամանկությունը, «լուսավորչական» հայի պատասխան ծաղրը<sup>38</sup>: Ընդ որում, ակնհայտ է, որ «ֆոանկի» անվան ներքո հասկացվում էին ոչ միայն կաթոլիկները, այլև բողոքականները: Մեկ այլ անտիպ հեքիաթում («Կաթոլիկը») կրկին կրոնական հողի վրա հակադրությամբ (հայ

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 437-449: Գրառվել է 1911 թ., Մոկսում:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 445:

<sup>36</sup> Ռոստամ Չալ. հայ-իրանական դյուցազնավեպ: Պատումների ժողովածու: Երևան, 2021, էջ 227: Հմմտ. Մոկս. հայոց բանահյուսական մշակույթը: Պատ. խմբագիր՝ Ս. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, Երևան, 1915, էջ 278-279:

<sup>37</sup> Տե՛ս ՀԺՀ, հտ. XVIII, Երևան, 2016, էջ 386-402 («Նոյեմգարի հեքիաթը»):

<sup>38</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 109, ցուցակ 7, գ. 1019, էջ 91-92:

հոգևորական-կաթոլիկ հանգուցյալի որդի) ծաղրի է ենթարկվում ֆռանկների շահամուլությունը<sup>39</sup>:

Բայր Ֆրենկի հետ միննույն հարթության վրա կարելի է դիտարկել էպոսի տարբեր պատումներում առկա «Խաչ պարոններին», ինչը ևս հավաքական կերպարի արտահայտություն է՝ կապված եվրոպական շփումների դրսևորումների հետ: Հասկանալի է, որ ասացողները տվյալ դեպքում հստակ տարբերակում են, որ խոսքը Մըսրա Մելիքի դաշնակիցների մասին է, որոնք, սակայն, ամեն դեպքում «կռապաշտ» չեն, առնչություն ունեն քրիստոնեության խորհրդանշանի հետ, այսինքն՝ քրիստոնյա են, բայց հայերին ոչ դավանակից: Մըսրա Մելիքի զորահավաքային տեքստերից (նամակներից) երբեմն տպավորություն է ստեղծվում, թե խոսքը որոշ սպառազինությամբ կամ հանդերձանքով տարբեր զորատեսակի մասին է, այլ ոչ թե որևէ օտարազգի դաշնակցի:

*Եկե՛ք, եկե՛ք,*

*Խաչ Պարոններ,*

*Մակո՛ղի Գլխներ,*

*Լեն ճակատներ,*

*Թիակ լեզվներ.*

*Եկե՛ք վրր գավուրին...<sup>40</sup>:*

Գրեթե բառացի նույնը կրկնվում է այլ պատումներում ևս.

*Սրե՛ք, արե՛ք*

*Իմ բեզլար բեզե՛ր,*

*Խաչ պարոններ՛ր,*

*Մակո՛ղի գրլխըդա՛ն,*

*Պալթա ագռե՛ք,*

*Պայ ճագտընե՛ր,*

<sup>39</sup> ՀԱԱ, ֆ. 1336, ց. 7, գ. 1025, էջ 33բ:

<sup>40</sup> Սասնա ծռեր, հտ. Բ, Ա մաս, խմբագրեց ակադ. Մ. Աբեղյան, աշխատակցությամբ պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1944, էջ 382:

*Թիակ լիզվրնէ՛ր,*

*Արէ՛ք գավուրի վըրեն...<sup>41</sup>:*

Ակնհայտ է, որ ասացողների կողմից հստակ ընդգծվում է Մըսրա Մելիքի և «Խաչ պարոնների» համար հավասարապես հայերի «գավուր», այն է՝ անհավատ և ոչ դավանակից լինելը:

Մ. Աբեղյանը և Կ. Մելիք-Օհանջանյանը հանձինս վերոհիշյալի՝ նկատի են առնում խաչակրաց արշավանքների ժամանակ Արևելքում հաստատված այն եվրոպացի (ֆրանկ) բարոններին, որոնք հաճախ համապատասխան պայմաններով վարձկան զորագնդեր էին տրամադրում որևէ օտարազգի իշխանավորի, այդ թվում՝ նաև մուսուլման սելջուկներին և արաբներին<sup>42</sup>: Նման գործարքներում կրոնական հատկանիշը նվազ դեր էր կատարում, ուղղակի մուսուլմանական վարձու զորագնդերից տարբերելու համար դրանք հենց այդպես էլ կոչվում էին «խաչ պարոններ» (իմա՝ բարոններ)<sup>43</sup>:

Վերոհիշյալն առավել բնորոշ էր Արևելքում հաստատված կաթոլիկ ասպետների ռազմական միաբանություններին՝ տաճարականներ (Templier), հիվանդախնամներ (Hospitaller) ևն, որոնք անմիջականորեն ենթակա էին Հռոմի պապին: Եվրոպացիների թվից մուսուլմաններն աստելությամբ էին լցված, հատկապես, կաթոլիկ խաչակիր ասպետների դեմ՝ նրանց ծայրահեղ անհանդուրժողականության, դաժանության, շահամոլության և ագահության պատճառով<sup>44</sup>: Միևնույնը տիրապետող էր նաև արևելաքրիստոնեական ուղղափառ եկեղեցիների հետևորդների, ինչպես նաև հայերի, ասորիների, մարոնիթների շրջանում, որոնք կաթոլիկ կղերի կողմից անխտիր

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 294:

<sup>42</sup> Սամա ծռեր, հմ. Բ, Բ մաս, էջ 843:

<sup>43</sup> Նույն տեղում:

<sup>44</sup> Усама ибн Мункыз. Книга назидания. Перевод М.А. Салье. Под ред. и с примеч. И.Ю. Крачковского. Вступ. статьи И.Ю. Крачковского и Е. А. Беляева. АН СССР. Ин-т востоковедения. Москва: Изд-во вост. лит., 1958, с. 12.

դիտարկվում էին որպես հերետիկոսներ: Հատկանշական է 1198 թ. Անտիոքի նվաճումից հետո խաչակրաց առաջին արշավանքի առաջնորդների նամակն Ուրբանոս պապին, որով խորհուրդ է խնդրվում արևելյան քրիստոնյաների հետ հետագա հարաբերությունների առնչությամբ. *«Մենք հաղթեցինք թուրքերին ու հեթանոսներին, բայց չկարողացանք պարտության մատնել հերետիկոսներին՝ հույներին ու հայերին չընդգծումը մերն է - Ս. Ռ.», ասորիներին ու հակոբիկներին»<sup>45</sup>*: Ոչ կաթոլիկ քրիստոնյաները ճնշումների էին ենթարկվում և կողոպտվում մուսուլմաններից ոչ պակաս, ավելին՝ խաչակիր ասպետները հաճախակի պատերազմում էին միմյանց դեմ և հավատակիցների դեմ աջակցության համար դիմում մուսուլմաններին: Մինևույն միաբանությունները զբաղված էին նաև վաշխառությամբ՝ այդ կերպ հարստահարելով նաև հավատակիցներին<sup>46</sup>:

Ըստ այդմ, վերոհիշյալը բացառում է ի դեմս «Խաչ պարոնների»՝ բյուզանդացիների դիտարկումը, ինչը հանիրավի նշվել է որոշ ուսումնասիրություններում<sup>47</sup>: Անգամ քննվող ժամանակահատվածի արարների և, ընդհանրապես, մուսուլմանների համար ֆրանկ-եվրոպացիները և ռում (հոռոմ)-բյուզանդացիները միմյանց հակոտնյա ուժեր էին՝ անկախ ժամանակ առ ժամանակ դրսևորվող երկկողմ համագործակցության փորձերից:

Ի վերջո, ինչպես ժամանակին նկատել է Գ. Գրիգորյանը, *«Բարը Ֆրենկը, Խաչ պարոնները, և բազմաթիվ այլ արտաքին*

<sup>45</sup> Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 135:

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 12-13: Հատկանշական է, որ հենց տաճարականներն էին կանգնած բանկային համակարգի ձևավորման ակունքներում:

<sup>47</sup> Օրինակ, Գ. Գրիգորյանի կարծիքով, *«ի դեմս Բարը Ֆրենկի և «Խաչ պարոնների» էպոսի ասացողները ներկայացնում են բյուզանդական ազդեցություններին և եվրոպական բոլոր գավթիչներին»* (Գրիգորյան Գ., Ժողովուրդների բարեկամության արտացոլումը «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսում, ՀՍՍՌ ԳԱ ՏՀԳ, No 7, էջ 49-64, 1956, էջ 59):

*հարստահարիչներ քրիստոնյաներ են, բայց այդ չի խանգարում էպոսի քրիստոնյա հերոսներին անխնա դատաստան տեսնել նրանց հետ»<sup>48</sup>:*

### **Եվրոպացու կերպարը «Քյոռոլի» էպոսում**

Ընդհանրապես, հայերի նման Արևելքում մուսուլմանները ևս եվրոպացիներին կոչում էին «ֆրանգ» («ֆարանգի», «ֆերանգի») ընդհանուր անվամբ, ինչն ավանդական էր դարձել խաչակրաց արշավանքներից հետո: Արաբական աշխարհագրության ու պատմագրության մեջ հանձինս ֆրանկների՝ նկատի էին առնվում Արևելքում հաստատված խաչակիրները և Արևմտյան Եվրոպայի բոլոր ժողովուրդները, որոնց մասին Մերձավոր Արևելքում մինչ խաչակրաց արշավանքներն աղոտ տեղեկությունների էին տիրապետում<sup>49</sup>: Ուսյալ սիրիացի արաբները խորապես ազդված և զարմացած էին ֆրանկների կոպտությունից, տգիտությունից, ազահությունից և ուխտադրժությունից, ինչը վկայում է XII դ. արաբ պատմիչ Ուսամա իբն Մունքիզը (Մունքիդ)<sup>50</sup>: Ընդ որում, մշակութային և բարոյական առումով եվրոպացի եկվորներն անհամեմատ ցածր էին արաբական վերնախավից, որոնց մեջ կրթված մարդիկ (ինչպես Ուսաման ինքը) բացառություն չէին<sup>51</sup>:

Օսմանյան կայսրությունում ջալալիների ապստամբություններից հետո դրանց ազդեցությամբ XVII դ. և հետագա ժամանակահատվածում ձևավորված «Քյոռոլի» էպոսի արևմտյան խմբի որոշ (թուրքական և այլ) տարբերակների կայուն դրվագներից է Ստամբուլի սուլթանի կամ փաշայի դուստր

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 63:

<sup>49</sup> Усама ибн Мункиз, նշվ. աշխ., էջ 11:

<sup>50</sup> Նույն տեղում:

<sup>51</sup> Նույն տեղում:

Նիգյարի<sup>52</sup> կնության առնելը կամ առևանգումը Քյոռոզլու կողմից, ինչի առնչությամբ ի հայտ է գալիս վերջինիս մրցակից ֆրանկ (Եվրոպացի) երիտասարդ ազնվականի կամ վեզիրի որդու կերպարը: Նիգյարի համար մենամարտում վերջինս պարտվում է Քյոռոզլուց և հեռանում իր երկիր, այլ տարբերակով՝ Քյոռոզլին սպանում է ֆրանկին (ferangi)<sup>53</sup>:

1830-ական թթ. Իրանի Ատրպատական երկրամասում Ալ. Խոճկոյի գրառած տարբերակում (V մեջլիս) Կ. Պոլսի սուլթանի դուստր Նիգյարին Չամլիբեկ տանելու ճանապարհին Քյոռոզլուն հանդիպում է մի երիտասարդ եվրոպացի ազնվական, որը ներկայացվում է որպես եվրոպացի նախարարի կամ եվրոպացի միապետի «*առաջին վեզիրի որդի*» (բնագրում՝ «*The son of the first vizier of the court of the European monarch*»)<sup>54</sup>: Վերջինս իր ուղեկից ծառաներով՝ 40 վրան գորքով, վաղօրոք ժամանած է լինում՝ հմայված լինելով Նիգյարի գեղեցկությամբ և նպատակ ունենալով կնության առնել նրան: Եվրոպացին նկատելով գույզին՝ իր ծառայի միջոցով յուրօրինակ ուղերձ է ուղարկում՝ քաղցրավենիք և խմիչք, ինչպես նաև 2 ձի: Քյոռոզլին ինքն իր սովորության համաձայն ներկայանում է որպես աշուղ, մոտենում է եվրոպացու վրանին, փախուստի մատնում նրա գորքը, մենամարտում հաղթում նրան և շղթայում: Ի վերջո, Նիգյարը տեղի է տալիս գերեվարված

<sup>52</sup> Յավվաչի թուրքական տարբերակում Դիյար հանրմը, նույնիմքն՝ Նիգյարը, Իրանի շահի դուստրն է, Ուրֆայի տարբերակով՝ Չինաստանի փառիշահի (Boratav P. N., Köroğlu Destanı, Ankara, 2016, s. 69):

<sup>53</sup> Հ. Պերպերյանը «Ֆերանգիի» դրվագի հետ համեմատելի է համարում Բյուզանդիայի Կոստանդինոս Բ կայսեր եղբոր՝ հանգուցյալ կայսր Կոնստանսի նշանածի (Օլիմպիա կամ Օլիմպիադա) հետ Արշակ Բ-ի ամուսնությունը (Պերպերյան Հ., *Արշակ Բ. և Քիոռոզլու*: Արտասույում «Ապագայ» շաբաթաթերթին սրբագրություններով և յաւելումներով, Փարիզ, 1938, էջ 24-25, 29):

<sup>54</sup> Chodzko A., Specimens of the Popular Poetry of Persia, as Found in the Adventures and Improvisations of Kurroglou, the Bandit-Minstrel of Northern Persia, and in the Songs of the People Inhabiting the Shores of the Caspian Sea. London, 1842, pp. 142-143:

Եվրոպացու թախանձանքին, ազատ է արձակում և համոզում Քյոռոզլուն չհետապնդել նրան<sup>55</sup>:

Եվրոպացու հետ կապված դրվագը ճշգրտությամբ վերաշարադրվել է Ս. Պեննի 1856 թ. թիֆլիսյան ռուսերեն թարգմանության մեջ<sup>56</sup>: Սակայն տվյալ դրվագի քննությունը բացակայում է էպոսի խոշորագույն հետազոտողներից Բ. Կարրիևի հայտնի աշխատությունից, Խոճկոյի գրառած տարբերակի V մեջլիսին վերաբերող հատվածում, փոխարենը «Ֆերանգի»- եվրոպացին վերածվել է քարավանատեր վաճառականի և հանիրավի կապակցվել այլ տարբերակներից հայտնի Բեզիրգենի կերպարին<sup>57</sup>: Ըստ ամենայնի, ականավոր հետազոտողն ուղղակի խուսափել է էպոսին օտար դրվագի քննությունից՝ բովանդակային առումով այն համարելով անհարազատ:

Միննույն դրվագը նույնությամբ առկա է, այսպես կոչված, «Փարիզյան ձեռագրում», որը հայտնաբերվել է Փարիզի Ազգային գրադարանում և համարվում է Խոճկոյի գրառմանն առավել հարազատ բնագիր<sup>58</sup>: Տվյալ տարբերակի V մեջլիսում Ստամբուլից Չամիլբեյ ուղևորվող Քյոռոզլուն և Նիզյարին հանդիպում է 30-40 վրանից բաղկացած զորք, որի ղեկավարն է «Ֆրանգ փառիշահի վեզիրի որդին» (*firəng padşahi vəzirinin oğlu*)<sup>59</sup>: Հաջորդաբար դեպքերն ամենայն մանրամասնությամբ զարգանում են Խոճկոյի տարբերակի կրկնությամբ:

<sup>55</sup> Նույն տեղում, էջ 144-148:

<sup>56</sup> Кёр-Оглу, восточный поэт-наездник. Полное собрание его импровизаций с присовокуплением его биографии. Перевод с английского С.С. Пенна., «Кавказ» No 31, 15 Апреля, Тифлис, 1856, сс. 123-124.

<sup>57</sup> Каррыев Б. А., Эпические сказания о Кёр-оглы у тюркоязычных народов. М., 1968, сс. 32-33.

<sup>58</sup> Koroglu. Paris nüsxəsi. Nəsr hissəsini farscadan tərcümə edən Q. Budaqi. Nəşrə hazır., ön söz, qeyd və şərhlərin müəll. İ. Abbaslı. Elmi. red. B. Abdulla. Bakı, “Şərq-Qərb”, 2005, ss. 81-85: Գրառումն ասորպատականյան թյուրքի լեզվով է, տարբերակն ունի 13 մեջլիս, առաջին հրատարակությունը՝ 1997 թ.:

<sup>59</sup> Նույն տեղում, էջ 81:

XX դ. 60-ական թթ. Թբիլիսիում հայտնաբերված և Ատրպատականի թյուրքերենով (թյուրքի) 28 գլխից կազմված էպոսի տարբերակում, որը պայմանականորեն կոչվում է «Թբիլիսյան ձեռագիր»<sup>60</sup>, եվրոպացու կերպարը հանդես է գալիս II գլխում, երբ Քյոռոզլին կարողանում է սուլթանի դուստր Նիգյարի հետ մեկնել երկրից, ճանապարհին մենամարտել և հաղթել իրեն հետապնդող Նիգյարի եղբայր Բուրջի-Սուլթանին, ապա եղբայրանալ նրա հետ: Դրան հաջորդող եվրոպացի երիտասարդ ազնվականի մենամարտը և պարտությունը Քյոռոզլուց հիմնականում մինևնույն գծերով է ներկայացվում<sup>61</sup>: *«Մինչ այժմ,- գրում է տվյալ դրվագը քննարկած Խ. Կորոզլին,- պատումն ընդանում էր օղուգ-թյուրքական էպոսի ոգով: Սակայն հետագայում ասացողը տեքստի մեջ է մտցնում թյուրքալեզու էպոսի համար բացարձակ օտար միջադեպ եվրոպացու («Ֆերանգի») հետ չընդգծումը մերն է - Ս. Ռ.}»<sup>62</sup>:*

«Ֆերանգիի» կերպարը հանդիպում է բազմաթիվ թյուրքական և ադրբեջանական պատումներում, առանց ազգային պատկանելության մասնավորեցման: Խ. Կորոզլու մեկնաբանությամբ, եվրոպացու կերպարը հանդիպում է նաև նախախլամական և հետագա իրանական բանահյուսության,

<sup>60</sup> Խ. Կորոզլու կարծիքով, այն գրառվել է XIX դ. երկրորդ կեսին՝ 1856 թ.-ից ոչ շուտ, և ավելի մի հին ձեռագրի պատճեն է (Короглы Х. Г., Взаимосвязи эпоса народов Средней Азии, Ирана и Азербайджана, М., 1983, с. 183): Պարսկերենի խիստ ազդեցությունն այս ձեռագրում թույլ է տալիս ենթադրել, որ այն ևս Ատրպատականում է գրառվել:

<sup>61</sup> Նույն տեղում, էջ 214-215:

<sup>62</sup> Նույն տեղում, էջ 215: Մինևնույն «Թբիլիսյան ձեռագրի» XXV մեջլիսում («Քյոռոզլու արշավանքը Մալաթիա քաղաք») առկա է համահունչ Ֆարհանգի (Ֆարանգ) կերպարը, որի և Քյոռոզլու գործերը մի քանի օր շարունակ պատերազմում են միմյանց դեմ Մալաթիայի պատերի տակ, և միայն երկու հերոսների դյուցազնամարտից հետո Ֆարհանգի պարտությամբ որոշվում է հաղթողը: Ընդ որում, Քյոռոզլին իր գործակիցների միջև է բաժանում ավարը, իսկ Ֆարհանգի որդի Քենանին բերում է Չամլիբեղ և նշանակում իր մատովակ, ինչն արդեն թյուրքական բարբերից բխող ավանդույթ է (նույն տեղում, էջ 244-245): Ամեն դեպքում Խ. Կորոզլին ինքը տարբերակում է Ֆերանգիի և Ֆարհանգի կերպարները՝ որևէ դեպքում դրանք չնույնացնելով:



ինչպես նաև օղուզական էպոսի մեջ<sup>63</sup>, սակայն «Քյոռօղլու» օրինակով որևէ «Ֆարանգիի» կամ «Ֆարանգեսթանից» սերող կերպար իրականում հայտնի չէ, իսկ բերված օրինակները բավական թույլ են և վերաբերվում են քրիստոնյա կանացի կերպարներին, որոնք հանրահայտ են (օրինակ, «Խոսրով և Շիրին» են)<sup>64</sup>: Խ. Կորոզլու պնդումը, թե եվրոպացի-ֆրանկի կերպարի առկայությունը կարող է կապակցվել օղուզների և բյուզանդացիների պատմական շփումներին<sup>65</sup>, հաշվի առնելով վերը նշված՝ միանգամայն բացառվում է: Ինչպես արդեն նշվել է, խնդրո առարկա ժամանակահատվածում մուսուլմաններն, ընդհանրապես, հստակ տարբերակում էին ֆրանկ-եվրոպացիներին բյուզանդացիներից:

Աղբբեջանական որոշ պատումներում ևս հանդիպում է միննույն եվրոպացու կերպարը, այդ թվում՝ նաև «Տիրանգի որդի» (*Firang oğlu*) տարբերակով: Ընդամին, Քյոռօղլին եվրոպացուն ուղղված մի հանպատրաստից խաղով է հանդես գալիս, դեպքերը զարգանում են միննույն կերպ<sup>66</sup>:

\* \* \*

Մեջբերվող աղյուսակում ներկայացվում են եվրոպացու կերպարի մասով «Սասնա ծռերի» և «Քյոռօղլու» արևմտյան խմբի տարբերակներում միմյանց համապատասխանող կետերը:

<sup>63</sup> Նույն տեղում, էջ 215:

<sup>64</sup> Ըստ երևույթին, նկատի է առնվում «Շահնամեից» Ֆերանգիսի (Ֆերանգիզ) կանացի կերպարը, որն առկա է նաև «Ռոստամ Չալի» հայկական պատումներից մեկում («Միավուշ»), «Ֆրոնգանիս» կամ «Ֆրոնգանիս» անվամբ (Ռոստամ Չալ. հայ-իրանական դյուցազնավեպ, էջ 329, 331-334, 339): Նույն կերպ հավանական է, որ նկատի է առնվել իրանական բանահյուսության հերոսներից Ֆերիդունի մայր Ֆերանկը (Корогли X. Г., նշվ. աշխ., էջ 82-83):

<sup>65</sup> Նույն տեղում, 215-216:

<sup>66</sup> “Koroğlu” dastanı (Əli Kamali arxivindəki variantlar), Bakı, 2009, ss. 264-265.

	Սասնա ծռեր»	«Քյոռոլի»
<b>Գլխավոր հերոս</b>	Սասունցի Դավիթ	Քյոռոլի-Ռուշան
<b>Հակառակորդ</b>	Եվրոպացի թագավոր (Բապը Ֆրենկի)	Եվրոպացի ազնվական, միապետի կամ վեզիրի որդի (Ֆերանգի կամ Ֆերանգ օղլու)
<b>Հակամարտության պատճառը</b>	Արքայադուստր Խանդուր-Խաթուն	Սուլթանի դուստր Նիգյար
<b>Ընթացքը</b>	Բապը Ֆրենկին 2 նամակաբեր է ուղարկում Դավթին սպառնա-գրով, Խանդուրը նրանց պատիվներով է ընդունում և ճանապարհում, տալիս 2 ձի	Եվրոպացին (Ֆերանգին) իր ծառաների միջոցով քաղցրավենիք և խմիչք, ինչպես նաև 2 ձի է ուղարկում, Նիգյարը համոզում է պատվով ընդունել մատուցված նվերները
<b>Հետևանքը</b>	Ճակատամարտ Բապը Ֆրենկի զորքերի դեմ, Դավթի հաղթանակը, Բապը Ֆրենկիի երկյուղը և փախուստը	Բախում և մենամարտ Եվրոպացու և նրա ծառաների հետ, Քյոռոլու հաղթանակը, Եվրոպացու երկյուղը և փախուստը
<b>Պատիժը</b>	Բապը Ֆրենկի գերեվարումը, մահը գլխատմամբ (զորական-ները խնայվում են և ստանձնում իշխանությունը)	Եվրոպացու գերեվարումը, ազատ արձակումը (Նիգյարի խնդրանքով կամ նրա օգնությամբ)

Տեսանելի ընդհանրություններն էական են, ըստ այդմ, դրանք կարող են նպաստել, ընդհանրապես, եվրոպացու հետ կապված գրույցի ծագման ակունքների բացահայտմանը:

Ընդհանրապես, հայկական վիպական որոշ տարրերի առկայությունը «Քյոռոլի» էպոսի թուրքական պատումներում

ժամանակին մատնանշվել է Ժորժ Դյումեզիլի<sup>67</sup> և Հայկ Պերպերյանի կողմից: Ֆրանսահայ բանասեր, արևելագետ Հ. Պերպերյանի կարծիքով, վերոհիշյալն իրականացվել է հայ աշուղների կողմից<sup>68</sup>, մանավանդ, մեծ թվով այն թուրքալեզու հայ աշուղների, որոնք մասնակցել են տվյալ ստեղծագործության ձևավորմանը:

«Քյոռոզլի» էպոսի թուրքական տարբերակներում հայկական կերպարների և, ընդհանրապես, հայերի հետ կապված դրվագների որոշակի առկայությունը թուրքալեզու հայ աշուղների ազդեցությանն է վերագրել էպոսի հայտնի հետազոտող Փերթև Նախլի Բորաթավը<sup>69</sup>: Հաշվի առնելով վերը նշվածը՝ մինևույնը վստահաբար կարող է վերաբերվել էպոսի որոշ տարբերակներում հանդիպող եվրոպացու (ֆերանգի) կերպարին:

«Սասնա ծռերի» պատումներում եվրոպացու կերպարը ներկայացված է հանձինս Բապը Ֆրենկի և Խաչ պարոնների: Առաջինը նույնացվում է Հռոմի պապի հավաքական կերպարի հետ, երկրորդը՝ խաչակիր բարոնների կամ ասպետների:

Երկու դեպքում էլ կերպարների առաջացումն արդյունք է խաչակրաց արշավանքների ընթացքում հայերի հետ հարաբերություններում արձանագրված պատմական իրողությունների, ինչը չէր կարող XII-XIII դդ. ավելի վաղ լինել:

Ֆրանկի (Բապը Ֆրենկի) կերպարն առկա է նաև հայկական բանահյուսական այլ նյութերում ևս («Ռոստամի ինքթաթ», «Լեւո ու Պապէ-Ֆորնկ»):

Եվրոպացու (ֆերանգի) կերպարն առկա է «Քյոռոզլի» էպոսի արևմտյան խմբի որոշ տարբերակներում (ատրպատականյան,

<sup>67</sup> Dumézil G., “Les légendes de “Fils d’aveugles” au Caucase et autour du Caucase”, *Revue de l’Histoire des Religions*, vol. 117, Paris, 1938, pp. 64-74.

<sup>68</sup> Պերպերյան Հ., նշվ. աշխ., էջ 42-43:

<sup>69</sup> Boratav P. N., նշվ. աշխ., էջ 126:

թուրքական, ադրբեջանական), այդ թվում՝ Ալ. Խոճկոյի գրառած հնագույն ամբողջական տարբերակում:

Կերպարը և նրա հետ կապված դրվագը գնահատվում են որպես օտարամուտ և ոչ բնորոշ թյուրքական էպոսի համար, այլ ստեղծագործություններում դրանք չեն հանդիպում:

Երկու էպոսներում ֆրանկի կերպարի հետ կապված առկա են զգալի էական ընդհանրություններ, ինչն արդյունք է որոշ քանահյուսական ներթափանցման:

Հաշվի առնելով կերպարի առաջացման պատմական պայմաններն ու միջավայրը, ինչպես նաև բնորոշ ժամանակահատվածը, եվրոպացու (ֆրանկի) կերպարը «Քյոռոզլի» էպոս հայկական խողովակներով կարող էր ներմուծվել «Մասնա ծոերից»:

## THE PERSONAGE OF EUROPEAN (FRANK) IN ARMENIAN AND TURKIC EPICS

*Samvel Ramazyan*

(Summary)

The research, especially of the Turkish versions of the epic “Koroglu”, reveals not only Armenian personages and episodes associated with Armenians, but also a certain presence of Armenian epic elements in them. From this point of view, it is of particular interest to consider the personage of the European or Frank and related episodes from the “Sasna Tsrer” (“Daredevils of Sassoun”) epic and the versions of the western group of the “Koroglu” epic.

In the versions of “Sasna Tsrer” the personage of the European is represented by Bapy (Pap) Frenk and Khach Parons. The first is identified with the collective image of the Pope, the second - with barons from crusader knights. In both cases, the appearance of personages is the result of historical realities recorded in relations with the Armenians during the Crusades, which could not have happened before the 12<sup>th</sup>-13<sup>th</sup> centuries.

The personage of Frenk (Bapy Frank) is also present in other Armenian folklore materials. The personage of the European (Ferang) is present in some versions of the western group of the epic “Koroglu” (Turkish, Azerbaijani), including the first complete recording of A. Chodzko. The personage and the

episode associated with him are considered allogenic (exogenous) and atypical for the Turkic epic, they are not found in other folklore materials.

In both epics there are significant similarities with the personage of the European (Frank), which is the result of some folklore penetration. Taking into account the historical conditions and environment of the appearance of the personage, as well as the typical period, the personage of the European (Frank) could be imported from "Sasna Tsrer" into the epic "Koroglu" through Armenian channels.

**ОБРАЗ ЕВРОПЕЙЦА (ФРАНКА) В АРМЯНСКОМ И  
ТЮРКСКОМ ЭПОСАХ**  
*Самвел Рамазян*  
**(Резюме)**

В последнее время изучение, особенно турецких версий эпоса «Кёроглы» («Кёроглу») выявляет не только армянские персонажи и эпизоды, связанные с армянами, но и определенное наличие в них армянских эпических элементов. С этой точки зрения представляет определенный интерес рассмотрение персонажа европейца или франка и связанных с ним эпизодов из эпоса «Сасна црер» («Сасунские удалцы») и версии западной группы эпоса «Кёроглы».

В сказаниях "Сасна црер" персонаж европейца представляют Бапы (Пап) Френк и Хач пароны. Первый отождествляется с собирательным образом Папы Римского, второй - с баронами или рыцарями-крестоносцами. В обоих случаях появление персонажей является результатом исторических реалий, зафиксированных в отношениях с армянами во время крестовых походов, чего не могло быть раньше XII-XIII вв.

Образ Франка (Бапы Френк) присутствует и в других армянских фольклорных материалах. Персонаж европейца (франг) присутствует в некоторых версиях западной группы эпоса «Кёроглы» (турецкая, азербайджанская), в том числе в первой полной записи А. Ходзько. Персонаж и связанный с ним эпизод считаются аллогеничными (инородными) и нетипичными для тюркского эпоса, в других произведениях они не встречаются.

В обоих эпосах есть существенные общие черты с персонажем европейца (франка), что является результатом некоторого фольклорного проникновения. С учетом исторических условий и среды появления персонажа, а также типичного периода, персонаж европейца (франка)

мог быть импортирован из «Сасна црер» в эпос «Кёроглы» по армянским каналам